ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ____________________
ՏՆՕՐԵՆ՝ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆ

# <<ԳԵՂԱՐՈՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

## 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր աշակերտի կրթել և դաստիարակել այնպես,որ հասկնա և ը
   դպրոցն իր ընտանիքն է:Շրջապատի,ընկերների,իրենից տարիքով փոքր աշա
   համար կրի պատասխանատվություն,կարողանա և ցանկանա օգնել նրանց,ճ
   ուղու վրա դնել, պաշտպանել բոլոր իրավիճակներում:

2. Աշխատել այն սկզբունքով,որ աշակերտն ընկալի,որ հայրենիքը սկսվում է
   ընտանիքից,բնակավայրից,այն դպրոցից ուր սովորում ես:Հայրենիքը սիրելու
   կօգնի դպրոցը, կդաստիարակի որպես հայ քաջորդի,հայրենիքի պաշտպան:Ա
   զինվորն ու հայուհին պետք է սովորեն զենք գործածել և պաշտպանվել <<կար
   քարտեզն ու լավ ճանաչեն հայրենի բնաշխարհը:

3. Աշակերտին ըստ տարիքային խմբի, ճիշտ բացատրել դպրոց հաճախելու
   իմաստը:Դպրոցը սովորեցնում է ոչ միայն կարդալ,գրել,հայերեն և օտար լեզու
   խոսել,հաշվել,տրամաբանել,այլ նաև պաշտպանել և պաշտել մայրենի
   լեզուն,կրոնը,ազգությունը:Դպրոցը սովորեցնում է ինքնուրույն մտածել և գործ
   տրամաբանել արարքներ կատարելուց առաջ,մտածել հետևանքների մասին:

4. Աշակերտին կրթել և դաստիարակել այնպես,որ ոչ միայն գիտենա իր
   իրավունքները,այլ նաև պատասխանատվության կրի,չթերանա պահպանել
   կարգապահական նորմերը,բացառի թերացումները և ուշացումները,պարտաճ
   լինի մեծերի և փոքրերի նկատմամբ:

5. Յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել այնպիսի կրթական մակարդա
   դպրոցից հետո իր ստացած գիտելիքների և դաստիարակության շնորհիվ աշխ
   գտնել,զբաղվել սիրելի գործով,տիրապետել որևէ արհեստի,որպեսզի կրթությո
   շարունակելուն զուգընթաց,առավել բարձր աստիճաններում ուսումնառությունը
   երաշխավորված արդյունք:

6. ՆԶՊ-ից ստ
   գիտելիքների շնորհիվ մեր հայրենքի սահմանները անառիկ կդառնան:

7. Մեր ուսուցչական կոլեկտիվի աշխատանքների շնորհիվ համուղդենք աշակեր
   գիտելիքները դպրոցական և մարզային օլիմպիադաներում ակտիվ մասնակցու
   ցուցաբերելու և հաղթելու համար:Ընդհանուր ուժերով ապահովենք ՏՀՏ-ի ծրագ
   յուրացումը,որոնողական աշխատանքների մասնակցությունը:

8. Հետևել,որ դպրոցում կիրառվեն այնպիսի մանկավարժական մեթոդներ,որոնք ս
   դյուրըմբռնելի դարձնեն առարկան,դասը,գործնական աշխատանքը:

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեությունը իրականացվում է Աշխատանքային օրենսգրքի, Հանրակրթության մասին օրենքի և կարգերի հիման վրա: Այդ աշխատանքների կազմակերպումը վերահսկվում է ներդպրոցական վերահսկողության միջոցով:

Ներդպրոցական վերահսկողությունը հետադարձ կապ է, որն իրականացվում է կառավարման գործընթացում, ըստ անհրաժեշտության, և ամփոփում է մանկավարժական համակազմի գործունեության համապատասխանությունը պլանավորված աշխատանքի արդյունքներին:

Ժամանակակից հանրակրթական դպրոցին առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերահսկողությունը պետք է լինի բազմանպատակ այսինքն՝ ուղղված է տարբեր հարցերի ուսումնասիրմանը (ուսումնադաստիարակչական, մեթոդական, գիտահետազոտական և փորձարարական գործունեություն, դպրոցի ուսումնանյութական բազայի կատարելագործում, սանիտարահիգիենիկ պահանջների կատարում, անվտանգության կանոնների պահպանում և այլն), բազմակողմանի՝ միևնույն ուղղության նկատմամբ վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում (ֆրոնտալ, թեմատիկ, ուսուցչի գործունեության անհատական վերահսկողություն և այլն), բազմաստիճան՝ միևնույն ուղղության վերահսկողությունը վարչական մարմինների տարբեր մակարդակներով (ուսուցչի աշխատանքը ուսումնական հաստատությունում վերահսկում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, ԿՊԿԼՄ): Խոսելով վերահսկողության մասին՝ անհրաժեշտ է տարբերակել վերահսկողության տեսակները, ձևերը և մեթոդները:

Վերահսկողության տեսակը որոշակի նպատակով իրականացվող վերահսկողության ձևերի համակցումն է: Վերահսկողության ձևերի առանձնահատկությունները բնորոշվում են նրանց ուղղությունների և առաջադրված խնդիրների յուրահատկություններով, ինչպես նաև վերահսկողության համար օգտագործվող միջոցներով: Ուսումնական

գործընթացում, ելնելով իրականացման նպատակներից, կարելի է առանձնացնել վերահսկողության երկու տեսակ՝ թեմատիկ և ֆրոնտալ: Թեմատիկ վերահսկողությունը իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում համակողմանի ուսումնասիրման և կառավարման որակի մասին տեղեկություն ստանալու նպատակով: Թեմատիկ վերահսկողության արդյունքներով անցկացվում են հարցազրույցներ, խորհրդակցություններ, կատարվում են գրավոր արձանագրություններ:

Վերահսկողության ձևը վերահսկողության կազմակերպման եղանակն է: Ըստ անցկացման պարբերականության՝ վերահսկողությունը կարող է լինել՝ մուտքային կամ ելքային, նախնական, ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ: Վերահսկողություն իրականացնելու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատություններում կարող են կիրառվել վերահսկողության հետևյալ ձևեր՝ Ընդհանուր դասարանական, Թեմատիկ, Առարկայական, Անհատական, Ընդհանուր և Կոմպլեքս (համալիր) վերահսկողություն:

Վերահսկողության մեթոդը առաջադրված նպատակին հասնելու համար վերահսկողության գործնական իրականացման եղանակն է: Կրթական գործունեության ուսումնասիրման համար վերահսկողության առավել արդյունավետ մեթոդներն են՝ դիտարկում, վերլուծություն, զրույց, փաստաթղթերի ուսումնասիրում, տեղեկագրում, ժամանակացույցի սահմանում, գիտելիքների բանավոր կամ գրավոր ստուգում: Ներդպրոցական վերահսկողություն է իրականացվում Ուսումնադաստիարակչական աշխատանքի, Արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանքի, Մեթոդական աշխատանքի և Փորձարարական և գիտահետազոտական աշխատանքի արդյունավետությունը գնահատելու նպատակով: Ներկայացված աշխատանքները ուղղված են ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, համապատասխանում են հանրակրթության մեջ տեղի ունեցող զարգացումներին և նպատակներին, նախատեսում են ներդպրոցական վերահսկողության աշխատանքներ:

# ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ –ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոցական բաղադրիչի բաշխում և դասացուցակի կարգավորում | Օգոստոս 24-31 2023թ | Տնօրինություն | |
| 2 | Մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, մանկ. խորհրդի նիստերի գրաֆիկի հաստատում ; Փոխտնօրենների ,դասղեկների հաշվետվությունների ծանոթացում,ուսուցիչների հաշվետվությունների ունկնդրում | Օգոստոս 24-31 2023թ | Տնօրինություն<br>Մանկ. կոլեկտիվ | |
| 3 | Օգոստոսյան խորհրդակցությունում . առաջ քաշված նորությունների պարազաբանում /2-րդ,5-րդ,7-րդ դասարան/:Կիսվող դասարանների առարկայական չափորոշիչների համապատասխան ծրագրերի կազման իրազեկում | Օգոստոս-սեպտեմբեր | Տնօրինություն<br>Մանկ. խորհուրդ | |
| 4 | Դասասենյակների,գրադարանի աշխատանքների կարգավորում , դասագրքերի հետ կապված աշխատանքների վերահսկում | Օգոստոս | Տնօրինություն<br>Գրադարանավար<br>Դասղեկներ | |
| 5 | Օրվա ուսումնական գործընթացի հետ կապված զեկուցում տնօրենին կատարված աշխատանքների մասին: | Տարվա ընթացքում | փոխտնօրեն | |

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ |
|---|---|---|---|
| 1. | Հետևել աշխատանքային կարգապահության,ներքին կարգապահական կանոններին, ուշացումներին: | Տարվա ընթացքում մշտապես | Փոխտնօրեն |
| 2. | Կիսամյակների ընթացքում ավագ դպրոցում IV և IX դասարաններում անցկացնել թեմատիկ ստուգումներ տնօրինության կողմից: | Տարվա ընթացքում | Փոխտնօրեն |
| 3. | Ուսուցիչներին պարբերաբար հաղորդակից դարձնել գիտական և մանկավարժական նվաճումներին,նորություններին: | Տարվա ընթացքում | Փոխտնօրեն |
| 4 | Կազմակերպել մանկ.կոլեկտիվի անդամների թեստավորման գործընթացը, բուժզննումը ըստ գրաֆիկի: | Սեպտեմբեր,հոկտեմբեր 2020 | Տնօրինություն |
| 5. | Ուսումնասիրել վերապատրաստված ուսուցիչների աշխատանքային գործունեությանը և համապատասխան գնահատական տալ աշակերտական, ծնողական և մանկ.խորհուրդների կողմից: | Ըստ վերապատ րաստման ժամանակա հատվածի | Տնօրինություն մանկ.կոլեկտիվ ծնողական և աշակերտական խորհուրդներ |
| 6. | Կազմել և հաստատման ներկայացնել քննական աշխատանքների հետ կապված ժամանակացույցը, մասնակցել քննական հանձնաժողովների ձևավորմանն ու խորհրդատվության աշխատանքներին: | Դեկտեմբեր 2022 հունվար 2023 | Տնօրինություն<br>փոխտնօրեն |

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ | ԾԱՆ ԹՈՒ ԹՅՈ |
|---|---|---|---|---|
| 1. | Հետնել աշակերտների ուշացումներին,կարգապահությանը, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը, դասագրքերի վիճակին:Հիշեցնել իրենց պարտականությունների, տնային հանձնարարությունների կատարմանը, հետնել հերթապահության աշխատանքներին: | Մշտապես | Տնօրինություն դասղեկներ | |
| 2. | Դասալսումների միջոցով՝ ըստ նախապես հաստատված գրաֆիկի հետնել մատուցվող նյութի որակին, տնային հանձնարարության քանակին,ուսուցչի կիրառած աշխատանքային մեթոդներին և դրանց համապատասխանությանը չափորոշչային պահանջներին և ուսումնական, թեմատիկ պլաններին: | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն | |
| 3. | Հետնել համակարգչային դասերի յուրաքանչյուր ամսին կատարելուն,պաշարների շտեմարանից օգտվելու գործընթացին: | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն | |
| 4. | Կատարված առարկայական ուսումնասիրությունները քննարկել մանկ.խորհրդի նիստերում: | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն փոխտնօրեն<br><br>մանկ.խորհուրդ | |
| 5. | Հետևողական լինել գնահատման ձևերի ճիշտ կիրառման հարցում, պարբերաբար հետնել բանավոր և թեմատիկ աշխատանքների հարցումների գնահատման քանակին և համապատասխանությանը էլմատյանում: | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն փոխտնօրեն | |

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|
| 6. | Աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքները հետաքրքիր դարձնելու նպատակով կազմակերպել առարկայական շաբաթներ,բաց դասեր,միջառարկայական մրցույթներ:Նախապատրաստվել ՀՀ անկախության,ուսուցչի տոնին,մայրության և գեղեցկության տոներին նվիրված միջոցառումներին (ոչ համավարակի պայմաններում): | Տարվա ընթացքում | Տնօրինություն փոխտնօրեն ուսուցիչներ | |
| 7. | Հետևել,որ տարեսկզբին ֆիզկուլտուրա առարկան անցկացվի դասարաններում, բացօթյա տարածքներում մարզական խաղերի կազմակերպման դեպքում պահպանվի սոցիալական հեռավորությունը: Հետևողական լինել, որ II կիսամյակում VIII-XI դասարաններում 14 ժամով անցնեն <<Առողջ ապրելակերպի>> դասընթացը: II-IV դասարանների աշակերտների համար հետաքրքիր և բովանդակալի, մատչելի ձևով վարեն շախմատի դասերը:Նորմատիվային գրանցումները ճիշտ կատարվեն, սերտ լինի կապը ՆԶՊ-ի միջոցառումների հետ: | Տարվա ընթացքում | Տնօրինություն փոխտնօրեն ուսուցիչներ ֆիզկուլտի և ՆԶՊ-ի ուսուցիչներ | |

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒ |
|---|---|---|---|---|
| 8. | Ստեղծված հանձնաժողովների աշխատանքի շնորհիվ ապահովել աշակերտների ընդգրկումը և նախապատրաստումը առարկայական օլիմպիադաներին, ասմունքի և ընթերցանության մրցույթներին,<<Կորյուն>>,<<Ազգային գավաթի>>,շախմատի մրցումներին, ինչպես նաև <<Մեղու>>, <<Կենգուրու>> ամենամյա մրցույթներին:Հնարավորինս ապահովել հաջողության հասնելու գործընթացին, ինչպես նաև հաղթելու դեպքում հաջորդ փուլերին մասնակցելու համար: | Հոկտեմբեր-դեկտեմբեր մարտ ապրիլ | Տնօրինություն փոխտնօրեն ուսուցիչներ | |

# ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒ

# ՀԱՄԱԿԱՐԳ

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ |
|---|---|---|---|
| 1. | Ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան,լրացուցիչ պարապմունքների միջոցով ապահովել բացթողումները: | Մշտապես, ուստարվա ընթացքում | Տնօրենի տեղակ ուս.գծով |
| 2. | Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի կազմակերպմանը, դասացուցակում կատարվելիք փոփոխություններին,յուրաքանչյուր ամիս ստուգել էլմատյանները: | Տարվա ընթացքում | Տնօրեն փոխտնօրեն |
| 3. | Հետևել [illegible] ծրագրված աշխատանքների ժամանակացույցին. փոխադարձ դասալսումների կատարմանը: | Տարվա ընթացքում | Տնօրինություն փոխտնօրեն |
| 4 | Տարեկան 2 անգամ անցկացնել ստուգիչ գրավոր աշխատանքներ ոչ միայն քննական այլ նաև միջին դպրոցի դասարաններում և դրանց արդյունքները քննարկել մանկ.խորհրդի նիստերում: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, տնօրենի տեղ ուս.գծով<br><br>մանկ.խորհուր |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Հետևել դասարանական և դպրոցական ընդհանուր ժողովների կազմակերպմանը | Ուստարվա ընթացքում | Տնօրենի տեղակալ դասղեկներ |
| 2. | Ծնողներին մասնակից դարձնել դասալսումներին, դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:Վերահսկել դպրոց – աշակերտ – ծնող կապը: | Մշտապես | Տնօրեն, տնօրենի տեղ դասղեկներ |

# ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ | ԾԱ ԹՈ ԹՅ |
|---|---|---|---|---|
| 1. | Անցկացնել [illegible] ղեկավարների խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում տալ համապատասխան ցուցումներ, աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ,քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր: | Յուրաքանչյուր ամիս | Տնօրինություն փոխտնօրեն | |
| 2. | Կատարել նպատակային դասալսումներ և նույն օրը քննարկել ուսուցչի հետ:Դասալսումների տետրում գրառել անհրաժեշտ դիտողությունը կամ հանձնարարականը, առաջարկությունը: Գրանցման դիմաց պետք է լինի ուսուցչի ստորագրությունը: | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն փոխտնօրեն<br>ուսուցիչներ | |
| 3. | Մշտապես ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին և ապահովել մեթոդամանկավարժական օգնություն: | Ուստարվա ընթացքում | տնօրենի տեղակալ ուս.գծով | |
| 4. | Տարեսկզբին հրավիրել խորհրդակցություն, պլանավորել ընթացիկ և տարեկան աշխատանքները հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառականության հետ կապված յուրաքանչյուր վերապատրաստված ուսուցիչ իր մեթոդմիավորման համար պետք է կազմակերպի սեմինար < Ներառական | | Տնօրինություն տնօրենի տեղակալներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար: | | | |

| N | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ | ՏՍ Ո ԹՐ ԹՅ Ն |
|---|---|---|---|---|
| 5 | Հետևել,որ<br>դասղեկները -<br>քննարկեն և ամբողջական տեսքի բերեն տարվա դաս. աշխատանքային պլանը և ներկայացնեն հաստատման:<br><br>բ.Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով և նախասիրականով սահմանված ժամկետներում ներկայացնեն առաջարկություններ:<br><br>գ.Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանավորումները և դրանց համապատասխանությունը չափորոշչային պահանջներին, անհրաժեշտության դեպքում տալ համապատասխան հանձնարարականներ:Պլանի լիարժեքության մասին տնօրենին ներկայացնել հաշվետվություն,ստուգել ծրագրերի կատարողականը: | Ուստարվա ընթացքում, սեպտեմբեր 2022<br>[illegible] | Տնօրինություն տնօրենի տեղակալներ դասղեկներ | |
| 6 | Բարձր հիմքերի վրա դնել <<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>> առարկայի դասավանդումը դպրոցում: | Տարվա ընթացքում, մշտապես | Տնօրինություն | |
| 7 | Կազմակերպել աշխատանքներ գրադարանի մեթոդական բաժինը մասնագիտական գրականությամբ հարստացնելու համար: | Մշտապես | Տնօրինություն գրադարանավար | |